ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Դեկտեմբերի 7-ին Վիրահայոց թեմի բոլոր եկեղեցիներում կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ 1988-ի Հայաստանի հյուսիսային հատվածի երկրաշարժի զոհերի:

Այդ օրը հավատացյալ հայորդիներով մարդաշատ էր նաև Թբիլիսիի առաջնորդանիստ եկեղեցին. այստեղ էին Վրաստանում ՀՀ դեսպանատան պաշտոնյաներ, Վրաստանի Խորհրդարանի հայ պատգամավորներ, Վրաստանի հայերի միության ու մտավորականության ներկայացուցիչներ, Թբիլիսիի հայոց դպրոցների մանկավարժներ ու աշակերտներ: Արարողությունը հանդիսապետում էր Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Հավարտ հոգեհանգստյան պաշտոնի առաջնորդ Սրբազան Հայրը իր խոսքում հայոց պատմության 1988-ի և 1990-ականների ժամանակաշրջանը համեմատեց Հին Կտակարանի երկու մեծերի՝ Եզրաս քահանայի և Նեեմի զորավարի գործունեության ժամանակների հետ, ովքեր ավերված Երուսաղեմի տաճարը վերաշինելու համար, իսրայելացիների հետ միասին, նետ ու աղեղը ձեռքերին, պայքարում էին թշնամիների և ելուզակների դեմ ու մյուս կողմից՝ վերականգնում և հզորացնում երկիրը:

«Ահավասիկ, պատմությունն այս անգամ էլ կրկնվեց,- ասաց Սրբազան Հայրը,- արցախյան հերոսամարտում հայ ժողովուրդը պայքարեց և մեր հայրերի Աստծու զորավիգությամբ նվաճեց իր ապրելու իրավունքը և հակառակ շրջափակման ու տնտեսական դժվարությունների, համայն հայության ուժերով, վերականգնեց աղետից ավերված բնակավայրերը»:

Սրբազան Հայրն իր գնահատանքի և երախտագիտության խոսքը հայտնեց առաջադեմ ողջ մարդկությանը և ի մասնավորի վրաց ժողովրդին, ովքեր ծանր այդ օրերին մեր ժողովրդի կողքին կանգնեցին և օգնության ձեռք մեկնեցին աղետյալ բնակչությանը:

Հիշատակի խոսք ասաց նաև Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, ով այդ տարիներին Վրաստանում ունենալով պետական բարձր պաշտոն՝ իր կարևոր նպաստն է բերել աղետի գոտուն ցուցաբերվող օգնությանը:

Հոգեհանգստյան արարողությունն ու հուշ-ցերեկույթը ավարտվեց Թբիլիսիի Սուրբ Գևորգ և Սուրբ Էջմիածին եկեղեցիների հոգևոր երգչախմբերի՝ Կոմիտասի և Մ.Եկմալյանի դասական և հոգևոր ստեղծագործությունների կատարումներով:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ